«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 96 500 456, +374 98 546 497
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT07-2503-C (2602)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 7-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	26 փետրվարի 2025 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 / Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	18:00

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Սարգիս Բաղալյան - ՀԽ նախագահ (առկա),
Աշոտ Մկրտչյան (առցանց),
Արտավազդ Մինասյան (առցանց),
Դավիթ Փախչանյան (առցանց),
Լիլիթ Պետրոսյան (առկա),
Լևոն Բուդաղյան (առցանց),
Եվա Արևիկյան (առցանց),
Իրինա Գեյկո (առկա),
Տիգրան Բունիաթյան (առցանց),
Տիգրան Հարությունյան (առցանց):

Նիստին չի մասնակցել՝
Ռաֆֆի Ֆըսթըգճյան

Եվա Արևիկյանը չի մասնակցել նիստի 7-ին, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հարցերի քննարկմանը:
Լևոն Բուդաղյանը չի մասնակցել նիստի 7-ին, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հարցերի քննարկմանը:
Արտավազդ Մինասյանը չի մասնակցել նիստի 7-ին, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հարցերի քննարկմանը:
Տիգրան Հարությունյանը չի մասնակցել նիստի 10-րդ և 11-րդ հարցերի քննարկմանը:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամներից տասը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը (առկա):

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցել են.
Դավիթ Սահակյան (Գործադիր տնօրեն: Առկա:),
Սիլվիա Նաջարյան (Հիմնական դպրոցի տնօրեն: Առկա:),
Հայկ Պողոսյանը (Գործառնական տնօրեն: Առկա:),
Գոհար Հովհաննիսյան («Այբ» հիմնադրամի գործադիր տնօրեն, Առկա:),
Իզաբելլա Մանասարյան (Ռեսուրսների ներգրավման և հաղորդակցության տնօրեն: Առկա:),

Տեր Մեսրոպ քհն. Արամյան («Այբ» դպրոցի ՀԽ-ի հիմնադիր նախագահ: Առկա: Մասնակցել է հարց 10-ին և 11-ին),
Աննա Ակոպյան (Համայնքի գծով տնօրեն: Առցանց: Մասնակցել է հարց 4-ին, 5-ին, 6-ին,7-ին, 8-ին, 9-ին, 10-ին և 11-ին),
Մերի Հովսեփյան (Ակադեմիական տնօրեն: Առկա: Մասնակցել է հարց 4-ին, 5-ին, 6-ին,7-ին, 8-ին ,9-ին, 10-ին և 11-ին):

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել:

Որոշում՝ հարց 1

Որոշվեց հաստատել ՀԽ-ի նիստի 2025 թվականի փետրվարի 26-ի օրակարգը:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 2. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ:

Հարց 3. Ներդրումային ֆոնդի բաշխման քաղաքականության հաստատում:

Որոշում՝ հարց 3

Որոշվեց հաստատել «Այբ» դպրոցի ներդրումային պահուստի ձևավորման և բաշխման քաղաքականությունը ըստ Հավելված 2-ի:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 4. 2025-2026 ուսումնական տարվա ուսման վարձերի սահմանման հարց:

Որոշում՝ հարց 4

Որոշվեց.

1. *Առաջնորդվելով «Այբ» դպրոցի ուսման վարձի սահմանման քաղաքականության դրույթներով՝ 2025-2026 ուսումնական տարվա համար.*
   - *1.1. Մինչև 2024-2025 ուստարին «Այբ» դպրոց ընդունված աշակերտների համար ուսման վարձի բազային դրույքը սահմանել 3,202,178 ՀՀ դրամ 2024-2025 ուսումնական տարվա բազային դրույքն ինդեքսավորելով 0.3 տոկոսով, բացառությամբ 2025 թվականին 5-րդ, 6-րդ, 10-րդ և 11-րդ դասարան փոխադրված աշակերտների:*
   - *1.2. 2024-2025 ուստարում «Այբ» հիմնական դպրոց ընդունված աշակերտների համար ուսման վարձի բազային դրույքը սահմանել 3,761,250 ՀՀ դրամ 2024-2025 ուսումնական տարվա բազային դրույքն ինդեքսավորելով 0.3 տոկոսով:*
   - *1.3. 2024-2025 ուստարում «Այբ» ավագ դպրոց ընդունված աշակերտների համար ուսման վարձի բազային դրույքը սահմանել 3,309,900 ՀՀ դրամ 2024-2025 ուսումնական տարվա բազային դրույքն ինդեքսավորելով 0.3 տոկոսով:*
   - *1.4. Մինչև 2024-2025 ուստարին «Այբ» դպրոց ընդունված աշակերտների համար ուսման վարձի բազային դրույքը սահմանել 3,309,900 ՀՀ դրամ 2024-2025 ուսումնական տարվա բազային դրույքն ինդեքսավորելով 0.3 տոկոսով, եթե աշակերտը 2025 թվականին փոխադրվում է 5-րդ, 6-րդ, 10-րդ կամ 11-րդ դասարան:*

1.5. 2025-2026 ուստարում «Այբ» հիմնական դպրոց ընդունված բոլոր նոր աշակերտների համար ուսման վարձի բազային դրույքը սահմանել 3,860,000 ՀՀ դրամ:

Որոշումը կայացված է միաձայն:

2. Ինդեքսավորել տրանսպորտային փոխադրման արժեքը 0,3 տոկոսով՝ սահմանելով.

2.1. «Այբ» հիմնական դպրոց 2024-2025 ուստարվա համար և դրանից հետո ընդունված բոլոր աշակերտների համար, ինչպես նաև 3-րդ, 5-րդ և 6-րդ դասարանի աշակերտների համար տրանսպորտային փոխադրման արժեքը 2025–2026 ուստարվա համար սահմանել տարեկան 296,687 ՀՀ դրամ:

2.2. «Այբ» ավագ դպրոց ընդունված բոլոր նոր աշակերտների համար, ինչպես նաև 10-րդ և 11-րդ դասարանի աշակերտների համար տրանսպորտային փոխադրման արժեքը 2025–2026 ուստարվա համար սահմանել տարեկան 296,687 ՀՀ դրամ կամ ըստ ֆինանսական աջակցության որոշման:

2.3. Մինչև 2023-2024 ուստարին «Այբ» դպրոց ընդունված հիմնական դպրոցի աշակերտների համար տրանսպորտային փոխադրման արժեքը 2025-2026 ուստարում սահմանել 200,356 ՀՀ դրամ, բացառությամբ 3-րդ, 5-րդ և 6-րդ դասարանի աշակերտների:

2.4. Մինչև 2023-2024 ուստարին «Այբ» ավագ դպրոց ընդունված աշակերտների համար տրանսպորտային փոխադրման արժեքը 2025-2026 ուստարում սահմանել 177,767 ՀՀ դրամ կամ ըստ ֆինանսական աջակցության որոշման:

Որոշումը կայացված է միաձայն:

3. Հաստատել «Այբ» դպրոցի ուսման վարձի սահմանման քաղաքականության փոփոխությունները և լրացումները ըստ Հավելված 3-ի:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 5. 2024 թ. և 2025թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող կազմակերպության ընտրություն:

Որոշում՝ հարց 5

Որոշվեց հաստատել «Bakertilly» ընկերությունը որպես «Այբ» դպրոցի 2024թ և 2025թ. ֆինանսական աուդիտն իրականացնող կազմակերպություն:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 6. Կառուցվածքի արդյունավետության գնահատման հաշվետվություն:

Հարց 7. Կրթավանի զարգացման աշխատանքերի կարգավիճակի հաշվետվություն:

Հարց 8. ՀԽ-ի հանձնարարությունների կատարման հաշվետվություն/ 2021 թվականի սեպտեմբերից սկսած:

Որոշում՝ հարց 8

Որոշվեց Հավելված 5-1-ի 73, 84, 87, 88 կետերը համարել հաստատված, իսկ կետ 25-ը չեղարկել:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 9. Դպրոցի տարածքի օգտագործում դասերից հետո:

Հարց 10. Մայիսին կայանալիք «Այբ» գալա միջոցառման ներկայացում
Հարց 11. Հատուկ հանձնաժողովի զեկույց:
Որոշում՝ հարց 11 *Որոշվեց Իեն Քրեյգի հետ իրականացնել արտաքին գնահատում:* Որոշումը կայացված է միաձայն:
Կետ 12 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: Բոլոր հարցերը ներկայացնել մայիսի 8-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:
Կետ 13. Նիստի ավարտ Հանդիպումն ավարտվեց ժամը 20:50-ին:

ՀԽ նախագահ

Սարգիս Բաղայան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____